

DOI: <https://doi.org/10.46991/FLHE.2024.28.2.080>

Վարդուհի Միրիջանյան*
<https://orcid.org/0000-0001-8591-470>
Երևանի պետական համալսարան

**ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԿՈՐՊՈՒՍԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Սույն հոդվածը նվիրված է անզլերեն և հայերեն իրավական փաստաթղթերում լայնորեն կիրառվող հապավումների ուսումնասիրությանը: Հապավումների ճիշտ գործածությունը հատկապես կարևոր դեր է կատարում իրավական փաստաթղթերում, որտեղ հետապնդում է երկար արտահայտությունների կրկնությունից խուսափելու և տարածք խնայելու նպատակ: Իրավական ոլորտին վերաբերող փաստաթղթերի թարգմանության դեպքում թարգմանչին անհրաժեշտ է հապավումների, դրանց կիրառման առանձնահատկությունների և նորմերի խորը իմացություն թարգմանության բարդ գործընթացը (անզլերենից հայերեն և հայերենից անզլերեն թարգմանություններ կատարելիս) ավելի դյուրին դարձնելու համար: Հայկական, ամերիկյան և յուրքսեմբուրգյան ընկերությունների միջև կնքված գույքի առքուվաճառքի միջազգային պայմանագրի փոքրածավալ կորպուսային վերլուծությամբ և արդյունքների համեմատությամբ բացահայտվում են ոչ միայն փաստաթղթում կիրառված հապավումների թարգմանական առավելությունները, այլև թերությունները, որն էլ թույլ կտա մեծապես բարելավել իրավական թարգմանության որակը և կնպաստի նմանատիպ փաստաթղթերի ճշգրիտ թարգմանությանը:

Բանալի բառեր. հապավումներ, իրավական փաստաթուղթ/ պայմանագիր, թարգմանություն, AntConc կորպուսային գործիք, կորպուսային վերլուծություն

* varduhimirjanyan@gmail.com



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 04/05/2024
Revised: 08/10/2024
Accepted: 26/11/2024

© The Author(s) 2024

Ներածություն

Լեզվի բառապաշարը շարունակաբար զարգանում և կատարելագործվում է հասարակության զարգացմանը զուգահեռ: Ի հայտ են գալիս նոր լեզվական միավորներ, որոնք այս կամ այն կերպ արտահայտվում են բառերով և համապատասխան իմաստներով: Նոր բառապաշարի կայուն շերտերից մեկն էլ հապավումներն են, որոնք իրենց ուրույն տեղն են գրավում բազմաթիվ լեզուներում և գործածվում են մարդկային գործունեության բոլոր ոլորտներում (ներառյալ իրավական պաշտոնական գրագրությունները)՝ հնարավորություն տալով տնտեսել ինչպես ժամանակը, այնպես էլ տարածությունը, խուսափել երկար արտահայտությունների կիրառությունից և կրկնությունից: Հապավումները նաև ընթերցողին կոնկրետ համատեքստից չշեղելու լավագույն միջոց են (Paris, 2022, p. 90):

Հապավման գործընթացում բնօրինակ բառը կամ արտահայտությունը կրճատվում է, այսինքն սկզբնական ընդլայնված կամ երկար տարբերակը դառնում է «կրճատ», «կտրված», կամ «սեղմ» (Herring and Nicoll, 2016, p. 360): Հապավումները բառակազմության մյուս բոլոր ձևերից տարբերվում են նրանով, որ ծագել են գրավոր լեզվի որոշակի միավորներ կրճատելու անհրաժեշտությունից և միայն դրանից հետո են սկսել կիրառվել բանավոր խոսքում: Հին ժամանակներում, երբ մագաղաթը, հետագայում նաև թուղթը թանկ էին, մարդիկ աշխատում էին քիչ տարածության վրա շատ բառեր գրել՝ զանազան եղանակներով կրճատելով ամենատարածված բառերը: Հետագայում, երբ հապավումների թիվը զգալիորեն աճեց, դրանք սկսեցին լայնորեն կիրառվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր խոսքում (Палкова, 2004, էջ 78; Սևակ, 2009, էջ 174; Imre, 2022, էջ 379):

Հիմնականում կրճատվում և հապավվում են համընդհանուր գործածության բառամիավորները, որովհետև անձանոթ հապավումների կիրառումը կարող է մեծապես դժվարացնել հաղորդակցության գործընթացը: Քանի որ հապավումների կիրառությունն անհրաժեշտություն է, ցանկացած գրվածքում գործածության առաջին դեպքում (նույնիսկ եթե կիրառվում է լայնորեն տարածված հապավում) փակագծում տրվում է հապավական բարդության բացատրությունը, իսկ հետագա շարադրանքում կիրառվում է միայն հապավումը: Դիվանագիտական գրագրության մեջ ընդհանրապես խորհուրդ չի տրվում հապավումներ գործածել (Ավետիսյան, 2011, էջ 23-24):

Հապավումների գործածությունը ինչպես իրավական, այնպես էլ պաշտոնական ոճի հատկանիշն է: Ընդհանրապես, և իրավական, և պաշտոնական գրագրության մեջ հապավումների թարգմանությունը

չափազանց բարդ գործընթաց է, և թարգմանիչը բախվում է որոշակի խնդիրների թե՛ հայերենից անգլերեն թարգմանելիս, և թե՛ անգլերենից հայերեն: Թարգմանչի խնդիրն է հապավումները հնարավորինս ճշգրիտ ներկայացնելը, որն էլ պահանջում է երկու լեզուների լավագույն տիրապետում: Բնականաբար, առաջնային կարևորություն է ստանում իրավական լեզվի գրագիտությունը, քանի որ հապավման ոչ ճշգրիտ կամ սխալ թարգմանությունը կարող է փոխել սկզբնատիպ բառի նշանակությունը և ընթերցողի մոտ շփոթմունք առաջացնել: Ավելին, փաստաթուղթը կարող է համարվել անվավեր (Matthews & Baish, 2007).

Մինչ մեր կողմից դիտարկվող հայ և արտերկրյա ընկերությունների միջև 2015 թվականին կնքած գույքի առքուվաճառքի միջազգային պայմանագրում կիրառվող հապավումների թարգմանական խնդիրներին անդրադառնալը մանրամասնենք հապավումների քերականական և կառուցվածքային որոշ առանձնահատկություններ:

Բառամիավորների հապավում. համառոտագրություն և կրճատագրություն

Հապավումները այնպիսի բարդություններ են, որոնք առաջ են եկել բառակապակցությունների կամ բաղադրյալ անվանումների բաղադրիչների կրճատագրության հիման վրա և ի տարբերություն բարդության այլ տեսակների իրոք գրավոր ծագում ունեն: Դրանց առաջացումը պայմանավորված է հասարակական- տնտեսական կյանքի և գործարարության հուժկու զարգացմամբ և առաջընթացով (Մարգարյան, 1993):

Բառերի համառոտ գրությունը ներկայանում է երկու տարատեսակով՝ բառի *համառոտագրությամբ* և բառի *կրճատագրությամբ*, որոնք տարբերվում են հապավման բնույթով: Թե՛ բուն համառոտագրությունները և թե՛ կրճատագրությունները բառերի կարճ կամ սեղմ գրության ձևեր են, որոնք չունեն ինքնուրույն բառային-բառույթային արժեք և նոր բառային միավոր չեն կազմում: Բառամիավորի կրճատումը կատարվում է մի քանի եղանակներով (Մարգարյան, 1977; Ավետիսյան, 2011): Տարբերակում են բառամիավորների կրճատ գրության մի քանի տեսակ, այն է՝ *հապավումներ (acronyms) սկզբնատառերով (initialisms)* կամ *այբուբենի տառերով (alphabetisms)*, որոնք առանձնանում են բաղադրիչ բառերի սկզբնական տառերի առանձին գրությամբ և արտասանությամբ, *համառոտագրություններ (abbreviations)*, որոնք արտասանվում են որպես առանձին բառեր, *կտրված կամ հատված ձևեր (clippings)*, որոնք ավելի երկար ձևերի կրճատումներ են և սովորաբար բառից անջատված վերջավորություններ են, *միախառնումներ (blends)*, որոնք միավորում են

երկու տարբեր բառերի մասեր (Crystal, 2008; Al Shlowiy, 2014): Այդուհանդերձ, *հապավում* (այս դեպքում՝ *abbreviation*) եզրույթի լայն առումով կիրառության դեպքում սովորաբար նկատի է առնվում բառակազմական այս կամ այն ձևով կրճատված բառամիավորը՝ այլ բառերից կամ արմատներից մեխանիկորեն կտրված բեկորը, որը սովորաբար բառի առաջնային վանկն է, բաղադրիչների տառերից կազմված միավորը, յուրաքանչյուր բառի առաջին տառը կամ հնչյունը, որոնք փոխարինում են մայր բառին կամ ներկայացնում են այն: Հապավումները, մեծագույն մասով, նախադաս են, այսինքն՝ ընդգրկում են ոչ թե բառավերջը՝ այլ բառասկիզբը կամ բառամեջը և հանդես են գալիս իբրև լրացում հաջորդ թեմայի կամ բառի համար (Սևակ, 2009, էջ 179):

Տառային հապավումը կազմվում է բառերի սկզբնատառերով և թեև լայն տարածում ունի՝ ավելի քիչ է հասկանալի: Տառային հապավումը պայմանական բառ է, որի գործածության հաճախականությունը պայմանավորում է ամբողջական իմաստի ընկալումը: Սովորաբար հաճախ գործածվող տառային հապավումը ավելի մատչելի է, քան դրա վերլուծական իմաստը (մասերի կամ տառային թեմաների իմաստը): Տառային հապավումները մեծ մասամբ գրվում են մեծատառերով: **Խառը հապավումը** կազմում է վանկային, տառային, բառային միավորներից՝ ներկայանալով վանկա-բառային, վանկա-տառային և տառա-բառային տեսակներով: Կարևոր է փաստել, որ տարբեր մշակույթներին պատկանող հապավումները տարիների ընթացքում կրում են փոփոխություններ ու տեղաշարժեր, արտացոլելով նույն ժամանակաշրջանում ժողովրդի հասարակական-տնտեսական կյանքում կատարվող բազմազան փոփոխությունները: Մեծ մասամբ լինելով այլևայլ ձեռնարկությունների, կազմակերպությունների, ընկերությունների, միավորումների, վարչությունների, կուսակցությունների, պետությունների, կուսակցական զանազան մարմինների և այլն բաղադրյալ անվանումների կրճատ մասերից կազմված բարդություններ, հապավումները, բնականաբար գոյատևում են այնքան ժամանակ, որքան գոյություն ունեն նշված հաստատությունները: Այլ կերպ՝ երբ այս կամ այն ձեռնարկությունը կամ ընկերությունը լուծարվում է և վերանում, անցյալի գիրկն են անցնում նաև համապատասխան բաղադրյալ անվանումի բաղադրիչներից կազմված հապավումները:

Այժմ անդրադառնանք անգլերեն և հայերեն հապավումների այն օրինակներին, որոնք կիրառվել են հայ և արտերկրյա ընկերությունների միջև 2015 թվականին կնքած գույքի առքուվաճառքի 127 էջանոց (գուգահեռաբար ընդգրկում է և՛ հայերեն, և՛ անգլերեն տարբերակները) միջազգային պայմանագրում: Փաստաթղթում օգտագործված հապավումների իմաստային վերլուծությունը, առավել ևս պայմանագրի AntConc

կորպուս գործիքի միջոցով իրականացված կորպուսային հետազոտությունը թույլ կտա վերհանել հապավումների թարգմանական տարբերությունները, առավելություններն ու թերությունները, գործածության հաճախականությունը, ինչպես նաև առկա թարգմանական խնդիրները:

Հապավումները միջազգային պայմանագրերում. AntConc թարգմանական կորպուս գործիքի միջոցով իրականացված հետազոտություն արդյունքները

Միջազգային պայմանագիրը իրավական և պաշտոնական գործառական ոճական լեզվական և արտալեզվական առանձնահատկությունների միասնության վրա հիմնված խոսքային դրսևորում է, որը փաստաթղթավորում է բանակցություններ վարելու, պայմանագիր կնքելու, այն իրավական ուժի մեջ մտնելուն առնչվող հարաբերություններ: Տվյալ գործընթացը կարգավորված է ՀՀ «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքով, որն ընդունվել է 2018թ. մարտի 23-ին: Նշված օրենքը *միջազգային պայմանագիր* տերմինը բնորոշում է որպես Հայաստանի Հանրապետության և պայմանավորվող մյուս կողմի (կողմերի) միջև մեկ փաստաթղթի կամ փոխկապակցված և միմյանցից անբաժանելի մեկից ավելի փաստաթղթերի տեսքով գրավոր ձևակերպված և միջազգային հանրային իրավունքով կարգավորվող համաձայնություն՝ անկախ դրա անվանումից» (ՀՀ օրենքը միջազգային պայմանագրերի մասին, 2018, էջ 1): Հարկ է նշել, որ միջազգային պայմանագիրը պարտադիր պետք է հետևի օրենքով սահմանված որոշակի լեզվական նորմերի՝ պարզ, հստակ, մատչելի լեզու և հնացած, բազմիմաստ, փոխաբերական բառերի ու արտահայտությունների, այլաբանությունների, չափազանցությունների, թաքնված ենթատեքստերի կիրառության անթույլատրելիություն: Ինչ վերաբերում է հապավումներին, ապա կազմված հայերեն հապավմանը զուգահեռ փակագծում կարող է տրվել նաև համապատասխան օտարալեզու հապավումը (Դանիելյան, 2021, էջ 137), եթե հայերեն տարբերակը դեռևս չի գրանցվել տպագիր և առցանց բառարաններում կամ կորպուսներում: Անգլերեն հապավումների դեպքում վերոնշյալ լեզվական պահանջները նույնն են, միակ տարբերությունն այն է, որ արդեն ստեղծվել և լայնորեն կիրառվում են տեղական և միջազգային իրավական հապավումների կանոնակարգված և համակարգչավորված տվյալների (software-based databases) հսկայածավալ բառարաններ ու կորպուսներ: Տվյալների բազան անընդմեջ թարմացվում է, և նորաստեղծ հապավումներն անմիջապես հայտնվում են նշված առցանց աղբյուրներում (Matthews & Baish, 2007; Cardiff Index to Legal Abbreviations, 2024):

Դիտարկվող գույքի առքուվաճառքի միջազգային պայմանագրի ամերիկյան կողմը ներկայացնում էՄի - Ջի Սոլյուշնս Գլոբալ Հոլդինգ Քամփնի (Մի-Ջի Սոլյուշնս Էլ-Էլ-սի) սահմանափակ պատասխանատվության ընկերությունը, իսկ լյուքսեմբուրգյան կողմը՝ Քոնթուր Գլոբալ Տերրա Հոլդինգ Էս-Ս-Էր-Էլ (Քոնթուր Գլոբալ) բաժնետիրական ընկերությունը (Asset Purchase Agreement/Գույքի առքուվաճառքի պայմանագիր, 2015): Ինչպես արդեն նշեցինք, ուսմնասիրվող 127 էջանոց իրավական փաստաթուղթը գուգահեռաբար ներկայացնում է պայմանագրի և անգլերեն, և՛ հայերեն տարբերակները, որն էլ առավել դյուրին է դարձնում լեզվական նյութի հետազոտությունը: Ներքևում ներկայացված են պայմանագրի առաջին երկու էջերը: Հաջորդող 125 էջերը կառուցված են նույն սկզբունքով՝ կողք կողքի տրվող հայերեն և անգլերեն տեքստային հատվածներով:

**Փոփոխված և լրամշակված
ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Ստորագրված
2015թվ. ապրիլի – ին
Հոտկյալ Կողմերի կողմից և միջև
«Որոտանի Հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ
և
Հայաստանի Հանրապետության
և
«Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ
և
«Քոնթուր Գլոբալ Տերրա Հոլդինգ Էս – Ս- Էր- Էլ»
և
«Մի – Ջի Սոլյուշնս Գլոբալ Հոլդինգ Քամփնի» Էլ – Էլ – Մի**

**Amended and restated
ASSET PURCHASE AGREEMENT
Dated as of April [•], 2015
Between
VOROTAN COMPLEX OF HYDRO POWER PLANTS CJSC
and
THE REPUBLIC OF ARMENIA
and
CONTOURGLOBING HYDRO CASCADE CJSC
and
CONTOURGLOBING TERRA HOLDING SARL
and
CG SOLUTIONS GLOBAL HOLDING COMPANY LLC**

ASSET PURCHASE AGREEMENT	ԳՈՒՅՔԻ ԱՌՔՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
<p>AGREEMENT (this “Agreement”) dated as of April [●], 2015 between:</p>	<p>Սույն Պայմանագիրը («Պայմանագիր») կնքվել է 2015թ. Ապրիլի – ինհետևյալ կողմերի միջև՝</p>
<p>1. VOROTAN COMPLEX OF HYDRO POWER PLANTS CJSC, a company incorporated in Armenia as a closed joint stock company, having its registered office at 2 G. Tatevatsi str., Goris 3201, Syuniq, Armenia and registered with the Armenian State Registry under number 18 070 00033 (“Seller”),</p>	<p>1. «Որոտան Հիդրոէլեկտրակայանների Համալիր» ՓԲԸ, Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված փակ բաժնետիրական ընկերություն, իրավաբանական հասցեն՝ Գ. Տաթևացի 2, Գորիս 3201, Սյունիքի մարզ, ՀՀ, գրանցման համարը՝ 1807000033 (այսուհետ՝ «Վաճառող»),</p>
	<p>2. Հայաստանի Հանրապետությունը</p>
	<p>3. «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ, Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված փակ բաժնետիրական ընկերություն, իրավաբանական հասցեն՝ ՀՀ, Երևան 0015, Գրիգոր Լուսավորիչի 9, գրանցված ՀՀ Պետական Ռեգիստրում 286 120 776089 համարի ներքո (այսուհետ՝ «Գնորդ»),</p>
<p>2 THE REPUBLIC OF ARMENIA</p>	<p>4. «Քոնթուր Գլոբալ Տերրա Հոլդինգ Էս – Ա – Էր - Էլ» Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության տարածքում գրանցված բաժնետիրական ընկերություն, իրավաբանական հասցեն՝ Պյոլի Ղոմենփոդ., 33, Լ-8070 Բերտրան, Լյուքսեմբուրգ (այսուհետ՝ «Քոնթուր Գլոբալ») և</p>
<p>3. CONTOURGLOBAL HYDRO CASCADE CJSC, a company incorporated in Armenia as a closed joint stock company,</p>	<p>5. «Մի-Ջի Սոլյուշնս Գլոբալ Հոլդինգ Քամփնի», Դելավեր, Ամերիկայի Միացյալ Նահանգներում գրանցված սահմանափակ</p>

<p>having its registered office at 9, G. Lusavorich Str. Yerevan 0015, Armenia and registered with the Armenian State Registry under number 286 120 776089 (“Buyer”),</p>	<p>պատասխանատվությամբ ընկերություն, իրավաբանական հասցեն՝ Քորփորեյշն Թրաստ Սենթրը, 1209, Օրանժիոդ. Ուելինգտոն Դելավեր 19801, Ամերիկայի Միացյալ Նահանգներ (այսուհետ՝ «Մի-Ջի Սոլյուշնս»):</p>
<p>WITNESSETH:</p>	<p>ՔԱՆՁԻ՝</p>
<p>WHEREAS, Seller owns and operates three power plants located on the Vorotan hydro cascade, Republic of Armenia, for a total capacity of 404.2MW, namely (i) the 76MW Spandaryan hydro power plant consisting of two units built in 1989, (ii) the 171MW Shamb hydro power plant consisting of two units built in 1979 and (iii) the 157 .2MW Tatev hydro power plant consisting of three units built in 1970, including all buildings and property, plant and equipment, spare parts, tools and office equipment, auxiliary equipment and equipment installed on that side of the interconnection point on which such generating units are located (all of the foregoing are collectively referred to as the “Facilities”);</p>	<p>Վաճառողը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Որոտանի հիդրոէլեկտրակայանների, այն է (i) 1989թ-ին կառուցված, երկու բլոկներից բաղկացած, 76ՄգՎ հզորությամբ Սպանդարյանի հիդրոէլեկտրակայանի, (ii) 1979թ-ին կառուցված, երկու բլոկներից բաղկացած, 171ՄգՎ հզորությամբ Շամբի հիդրոէլեկտրակայանի, և (iii) 1970թ-ին կառուցված երեք բլոկներից բաղկացած, 157,2ՄգՎ հզորությամբ Տաթևի հիդրոէլեկտրակայանի (որոնց ընդհանուր հզորությունը կազմում է 404,2 ՄգՎ), ինչպես նաև բոլոր այն շենքերի, գույքի, արտադրամասերի, պահեստամասերի, գործիքների, գրասենյակային սարքավորումների, օժանդակ սարքավորումների և բոլոր այն այլ սարքավորումների սեփականատերն ու շահագործողը, որոնք գտնվում են սահմանազատման կետի այն մասում, որտեղ տեղակայված են նշված էլեկտրակայանները (այսուհետ՝ «Սարքավորումներ»),</p>
<p>WHEREAS Seller, a company wholly-owned by the Republic of Armenia, conducts <i>inter alia</i> the business of operating the</p>	<p>Վաճառողը, որը հանդիսանում է ամբողջությամբ ՀՀ կողմից վերահսկվող ընկերություն, զբաղվում է, ի թիվս այլ գործունեության, Սարքավորումների</p>

<p>Facilities and selling electricity produced by the Facilities (this specific part of business of the Seller hereinafter being referred to as the “Business”);</p>	<p>շահագործմամբ և Մարքավորումների շահագործման արդյունքում ստացված էլեկտրաէներգիայի վաճառքով (Վաճառողի գործունեության վերակարգված մասը այսուհետ՝ «Գործունեություն»),</p>
<p>WHEREAS, Buyer is an Affiliate of ContourGlobal L.P., a global power company managing and operating a diversified portfolio of operating companies;</p>	<p>Գնորդը հանդիսանում է Փոխկապակցված Անձ «ՔոնթուրԳլոբալ» ԷլՓի-ի հետ, որը հանդիսանում է զանազան գործող ընկերությունների կառավարում և շահագործում իրականացնող էներգետիկ ընկերություն,</p>
<p>WHEREAS, Buyer desires to purchase the Purchased Assets (as desired below) from Seller, and Seller desires to all the Purchased Assets to Buyer;</p>	<p>Գնորդը ցանկանում է Վաճառողից ձեռք բերել, իսկ Վաճառողն էլ ցանկանում է Գնորդին վաճառել Վաճառվող Գույքը (սահմանումը բերված է ստորև),</p>

Ընդհանրապես իրավական ցանկացած ակտում յուրաքանչյուր հապավում առաջին գործածության դեպքում տրվում է գրեթե ամբողջական անվանումով՝ *CG Solutions Global Holding Company LLC (Մի-Ջի Սոլյուշնս Գլոբալ Հոլդինգ Քամփնի)* և նշումով, որ հետագա շարադրանքում գործածվելու է միայն հապավված տարբերակը՝ *CG Solutions (Մի-Ջի Սոլյուշնս)*: Այս դեպքում անգլերեն տարբերակում *LLC (limited liability company)* հապավումը ամբողջապես ներկայացվել է ընկերության վերաբերյալ տեղեկություններ հաղորդելիս, մինչդեռ հայերենում համարժեք հապավումը՝ *ՄՊԸ (սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն)* անվան մեջ ընդհանրապես չի արտացոլվել, իսկ պայմանագրի անվան մեջ ներկայացվել է անգլերենի տառադարձմամբ՝ *Էլ-Էլ-Մի*, մինչդեռ կարող էր տրվել հայերենում ամրագրված *ՄՊԸ* տարբերակով: Ինչ վերաբերում է լյուքսեմբուրգյան *Contour Global Terra Holding SARL* (ֆրանս. *société à responsabilité limitée*) բաժնետիրական ընկերությանը, հայերեն տարբերակում՝ *Էս-Ս -Էր-Էլ* տառադարձմամբ ներկայացվել է համապատասխան ֆրանսերեն հապավումը: Նպատակահարմար կլիներ երկու դեպքում էլ կիրառել հայերենի *ՄՊԸ* և *ՓԲԸ* հապավումները, որոնք լիովին ընկալելի կլինեին պայմանագրի հայկական կողմին:

Պայմանագրի հենց առաջին էջից աչքի զարնող վերոնշյալ թերացումների շտկումը մեծապես պայմանավորված է թարգմանության գերժամանակակից տեխնոլոգիական միջոցների և գործիքների կիրառմամբ, որն էլ փորձել ենք անելանընդմեջ նորացվող AntConc կորպուս գործիքի միջոցով: AntConc կորպուս գործիքը արհեստական բանակա-նությամբ կառավարվող անվճար, բազմահարթակ, բազմաֆունկցիոնալ կորպուսային վերլուծության գործիք է, որընախատեսված է միայն փոքրածավալ կորպուսային լեզվաբանական հետազոտություն կատարելու համար (ինդեքսային տվյալների բազա չունենալու պատճառով): Այն ընդգրկում է գործիքների համապարփակ փաթեթ, որն ընձեռում է տարբեր լեզուներիցթարգմանական հետազոտություն կատարելու հնարավորություն: Գործիքակազմի բաղադրիչներն են հզոր համադրիչը (concordancer), բառերի և հիմնաբառերի հաճախականության գներատորները (word and keyword frequency generators), բառային և կլաստերային վերլուծության (cluster and lexical bundle analysis) գործիքները և բառերի բաշխման հատվածը (a word distribution plot), որոնք հնարավորություն են տալիս կորպուսային հետազոտություններ կատարել թարգմանաբանության, ոճագիտության, բառարանագիտության, քերականության, լեզվի ուսուցման ոլորտներում (Anthony, 2024, էջ 7): Թարգմանաբանության ոլորտի հետազոտություններում նշված գործիքը թույլ է տալիս համեմատական վերլուծության ենթարկել երկլեզու միավորներ, բացահայտել որոշակի թարգմանական թերություններ և սխալներ: Կորպուսային այս գործիքի միջոցով կատարված հետազոտությունները հատկապես կարևորեն գիտական տերմինների և հապավումների թարգմանության մաքսիմալ ճշգրտությունը ապահովելու գործում: Թեև AntConc-ն ուղղակիորեն չի թարգմանում հապավումները, այն մեծապես նպաստում է տվյալ կորպուսի շրջանակներում լեզվաբանական հետազոտություններ կատարելուն և լեզվական մեխանիզմներ հայտնաբերելուն: Չուտ տեղեկություն հաղորդելու առումով նշենք, որ հայերեն-անգլերեն թարգմանություններ կատարելիս կարելի է օգտվելEANC(Eastern Armenian National Corpus, 2007-2009)կորպուսից, որը պարունակում է 110 միլիոն հիմնաբառ:

Քանի որ հետազոտության հիմնական նպատակը իրավական և պաշտոնական միաձույլ ոճական հատկանիշներով պայմանավորված միավորների՝ հապավումների դիտարկումն է և դրանց ճշգրիտ թարգմանությունը, այլ ոչ թե Cluster_results.txt կամ N-Gram_results.txt հետազոտությունը, ներկայացնենք միայն բառերի բաշխման և համադրման Word_results.txt կորպուսային վերլուծության արդյունքները:

Type /Token	Lemma/Headword	Rank	Frequency	Range	Norm Freq
cjsc	1	5	1	228.812	1
str	1	8	1	366.099	1
sarl	1	3	1	137.287	1
llc	1	6	1	274.574	1
cg	1	7	1	320.337	1
aen	1	23	1	1052.535	1
amd	1	24	1	1098.298	1
hsbc	1	1	1	45.762	1
psrc	1	24	1	1098.298	1
src	1	1	1	45.762	1
vat	1	4	1	183.050	1
c	1	39	1	1784.734	1
oecd	1	1	1	45.762	1
hh	1	4	1	183.050	1
hէց	1	11	1	503.386	1
ամն	1	4	1	183.050	1

Գծայատկեր1: Word_results.txt

Առաջին՝ *Type/Token* եզրույթը բառամիավորն է, այս դեպքում՝ հապավումը, *Lemma*-ն մատնանշում է այն բառամիավորը, որը մեկ անգամ ներմուծվելուց հետո դառնում է ոչ միայն տվյալ տեքստի, այլև համընդհանուր կորպուսի գլխաբառ: *Rank*-ը՝ ցույց է տալիս գլխաբառի կրկնելիության աստիճանը տվյալ կորպուս ներմուծված տեքստում: *Frequency*-ն բառի կիրառման հաճախականությունն է տվյալ կորպուսում, այսինքն մեր պայմանագրի 127 էջերի շրջանակում: *Range*-ը մատնանշում է բառամիավորի համընդհանուր բաշխման աստիճանը որոշակի ոլորտի վերաբերող կամ համընդհանուր կորպուսային տեքստերում: *NormFreq*-ը ցույց է տալիս, բառանմուշի կիրառման հաճախականությունը, այսինքն, թե տեքստի քանի (սովորաբար հազար կամ միլիոն) բառերը մեկ է կրկնվում տվյալ բառանմուշը: Այսպես, օրինակ, *cjsc* – *փբբ* բառանշանի (Type/Token) 1-5-1-228. 812 թվանիշերը ցույց են տալիս, որ

1. Lemma/Headword (գլխաբառ) – 1. *cjsc* – *փբբ* հապավումը մեր կորպուսում առանցքային նշանակության միավոր է (*keyword*),
2. Rank (սանդղակ) – 5. հապավումը տվյալ պայմանագրում կիրառվող բառերի քանակական սանդղակում գրավում է հինգերորդ տեղը,

3. Frequency (հաճախականություն) – 1. տվյալ պայմանագրում այն կիրառվել է մեկ անգամ,
4. Range (շրջանակ) – 228.812. հապավումը AntConc կորպուս ներմուծված 812 փաստաթղթերի մեջ հայտնվել է 228. 812 անգամ, այսինքն բաշխվածության աստիճանը միջին է,
5. NormFreq (նորմալացված հաճախականություն) – 1. պայմանագրի և՛ հայերեն, և՛ անգլերեն տարբերակներում հապավման կիրառելիության հաճախականությունը նույնն է:

Հաջորդ բառանիշ-հապավման (*str*) դեպքում փաստաթղթում համարժեք հայերեն միավորը տրված է ոչ թե որպես հապավում, այլ որպես ամբողջական բառ (*փողոց*): Անգլերեն *str* հապավման 1-8-1-228. 812-366.099-1 թվանիշերը բացահայտում են, որ այն առանցքային միավոր է, պայմանագրում կիրառվող բառերի սանդղակում գրավում է 8-րդ տեղը, տվյալ պայմանագրում կիրառվել է մեկ անգամ, AntConc կորպուսում հայտնվել է 366.099 անգամ, 182 կորպուսային նյութերի հետհամեմատած՝ հաճախականությունը գրեթե նույնն է:

Մնացած հապավումները առանձին-առանձին դիտարկելու փոխարեն վերլուծենք արդյունքները՝ վերջնական հետևություններ և եզրակացություններ անելու համար: Պայմանագրի տեքստում *SARL (société à responsabilité limitée)* և *LLC (limited liability company)* տառային հապավումները, ինչպես արդեն վերևում նշեցինք, թարգմանվել են ֆրանսերենի և անգլերենի տառադարձմամբ (*Էս-Ս-Էր-Էլ* և *Էլ-Էլ-Սի*) հայերեն *ՄՊԸ*-ի փոխարեն, որն էլ կարող է լուրջ բացթողում համարվել: Հակառակ նշված հապավումների սխալ կիրառությանը, հայերեն *Սի-Ջի (CG – Consulting Group)* և *Էյ-Էս-Բի-Սի (HSBC)* տառադարձումները լիովին արդարացված են, քանի որ ընկերության բնօրինակ անվան մեջ այն արտասանվում է նույն ձևով և չի կարող թարգմանվել, այնպես, ինչպես օրինակ *գրուփ* և *հոլդինգ* բառերը, որոնք հայերենում չունեն համապատասխան տնտեսագիտական եզրույթ-համարժեքները և պահպանում են իրենց անգլերենի արտասանությունը: Սովորաբար օտար լեզուներից վերցված տառային հապավումները կամ հայագիր փոխառյալ հապավումները, եթե կարդացվում են տառերի անվանումներով, հնչադրվում և գրվում են յուրահատուկ ձևով՝ որպես վանկային հապավում: Ե՛վ անգլերենում, և՛ հայերենում դրանք համարվում են բաղադրյալ տառային հապավումներ:


Հայերենի *ՀԵՑ* (Հայաստանի էլեկտրական ցանց) և անգլերենի *AEN (Electric Networks of Armenia)* հապավումը ճշգրիտ թարգմանություն է, թեև այն պայմանագրում կիրառվող բառերի քանակական սանդղակում գրավում է հինգերորդ տեղը, կորպուսում հայտնվել է 1052.535 անգամ: Սովորաբար տառային հապավումներում բացատներ կամ միջակետեր

չեն դրվում սկզբնաղբյուր լեզվում, անգամ փոքրատառերով հապավումների դեպքում: Նաև տառանուններով կազմված հապավումներում մեծատառ է գրվում յուրաքանչյուր բառի առաջին տառը, որն էլ արվել է *AEN/ՀԵՑ* հապավման դեպքում կրճատ, սկզբնատառերով և մեծատառերով: Թյուրմբնումներից խուսափելու համար նշենք, որ կորպուս ներմուծվող տեքստերում մեծատառերից խուսափելու կանոններ են պարտադրվում, այդ է պատճառը, որ կորպուսային աղյուսակում բոլոր հապավումները տրված են փոքրատառերով: Ավելացնենք, որ և՛ անգլերենում, և՛ հայերենում *AEN/ՀԵՑ* հապավման առաջին կիրառությունը տրված է ամբողջական բացատրությամբ՝ անգլերենում բոլոր բաղադրիչները տրվել են մեծատառով, իսկ հայերենում՝ միայն առաջին բաղադրիչը: Կարելի է ուղղակի զարմանք արտահայտել այն փաստի վրա, որ *էկեկտրական* բառը հապավման մեջ հայտնվել է *է* տառով՝ *ՀԵՑ*, այլ ոչ թե *ՀԷՑ*, մինչդեռ կորպուս գործիքը տվել է միայն ճիշտ տարբերակը՝ *ՀԷՑ*: Ինչ վերաբերում է արժույթի *AMD - Armenian Dram* և *ՀՀ դրամ - Հայաստանի Հանրապետության դրամ կամ հայկական դրամ* և *USD - United States dollar* և *ՄՄՆ դոլար - Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլար կամ ամերիկյան դոլար* ստանդարտ հապավումներին՝ անգլերեն տառային հապավումը գրված է երեք մեծատառ բաղադրիչ տառերով, իսկ նրա ամբողջական բացված տարբերակում երկու բաղադրիչ բառերի միայն սկզբնատառերն են գրված մեծատառերով, իսկ հայերենում հապավումը բաղկացած է երեք բաղադրիչներից, ընդ որում առաջին և երկրորդ բաղադրիչ տառերը գրված են մեծատառով, իսկ երրորդը՝ փոքրատառով: Ի դեպ հարկ է նշել, որ *ՀՀ դրամ* հապավումը սովորաբար կիրառվում է ուղիղ ձևով՝ առանց հոլովական վերջավորության:

ՀԾԿՀ (Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով) հապավումը ներկայացվել է անգլերեն ճշգրիտ համարժեքով՝ *PSRC (Public Service Regulatory Commission)*: Քանի որ այն զուտ հայկական կառույց է, AntConc կորպուս ներմուծված փաստաթղթերում դրա բաշխվածության աստիճանը ցածր է, մինչդեռ *Value-Added Tax (VAT)/ Ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ)* հապավման բաշխվածության աստիճանը միջին է, քանի որ այն լայնորեն կիրառվող տնտեսագիտական եզրույթ է: Բաշխվածության աստիճանը ամենաբարձրն է (*1784.734*) *c/q* տառերով զուգահեռ կառույցներ թվարկող հապավման դեպքում, և սա բնական է, քանի որ և՛ իրավական, և՛ պաշտոնական ոճերում, առավել ևս պաշտոնական փաստաթղթերում, այն շատ է կիրառվում զուգահեռ կառույցներ թվարկելիս (*a, b, c .../u, p, q...*) և կարող է գրվել ինչպես փոքրատառ, այնպես էլ մեծատառ: *OECD (The Organization for Economic Cooperation and Development)* հայերեն համարժեքը պայմանագրում չի կիրառվել, փոխարենը անվանումը տրվել

է ամբողջությամբ՝ *Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն*: Թեև այն պայմանագրում հիմնաբառ է, այդուհանդերձ դրա բաշխվածության աստիճանը ցածր է (45.762):

Ոչ միայն AntConc կորպուսի փոքրածավալության, այլև հայերենով կորպուսների սղության պատճառով, ցավոք, AntConc գործիքը Cluster_results.txt, Word_results.txt, N-Gram_results.txt աղյուսակներում դիտարկել է միայն ՀՀ, ՀԵՅ, ԱՄՆ հապավումները: *N-Gram_results.txt* աղյուսակի հապավումների արդյունքների հիման վրա ներկայացված ներքոնշյալ Գծապատկեր 2-ը ներկայացնում է հայերեն և անգլերեն հապավումների կիրառության համամասնությունը՝ 7 հայերեն և 61 անգլերեն համատեքստային հապավումներ: Հուսանք, որ մոտ ապագայում հայ մասնագետները կկարողանան ստեղծել հայերենի նոր, լայնածավալ կորպուսներ:



Գծապատկեր 2: N-Gram_results.txt

Եզրակացություն

Այսպիսով, փաստենք, որ իրավական և պաշտոնական գործառական դրսևորումներում ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում, մեծ թվով հապավումներ են գործածվում, որոնց ոչ ճշգրիտ և ոչ համարժեք թարգմանությունը խաթարում է հասկացության իմաստը և տարբերությունների տեղիք տալիս: Առավել կարևոր է հապավումների դերը իրավական և պաշտոնական գործառական ոճական լեզվական և արտալեզվական

առանձնահատկությունների միասնության վրա հիմ է բանակցություններ վարելու, պայմանագիր կնքելու, այն իրավաբանական ուժի մեջ մտնելուն առնչվող նվաճ փաստաթղթում՝ միջազգային պայմանագրում, որը փաստաթղթավորում հարաբերություններ: Պայմանագրում կիրառված հապավման թարգմանությունը պահանջում է իրավական լեզվի իմացություն, քանի որ հապավման ոչ ճշգրիտ կամ սխալ թարգմանությունը կարող է փոխել բնագրում տրված բառի նշանակությունը և ընթերցողի մոտ շփոթմունք առաջացնել: Ավելին, փաստաթուղթը կարող է համարվել անվավեր:

Հայ և արտերկրյա ընկերությունների միջև 2015 թվականին կնքած գույքի առքուվաճառքի միջազգային պայմանագրում կիրառվող հապավումների AntConc կորպուս գործիքի միջոցով իրականացված հետազոտության արդյունքում կարող ենք փաստել, որ հապավումների թարգմանության առումով առկա են ինչպես առավելություններ, այնպես էլ թերություններ և թարգմանական խնդիրներ: Անգլերեն հապավումների դեպքում արդեն կիրառվում են տեղական և միջազգային իրավական հապավումների կանոնակարգված և համակարգչավորված տվյալների հսկայածավալ բառարաններ ու կորպուսներ, մինչդեռ հայերենում տվյալների բազան չափազանց փոքր է և գրեթե չի թարմացվում, որն էլ իր հերթին չի նպաստում թարգմանական խնդիրների գրազետ լուծումներ գտնելուն և դրանք գործնականում կիրառելուն:

Գրականություն

- Shlowiy, A. (2014). Texting Abbreviations and Language Learning. *International Journal of Arts & Sciences*, 07(03), 469-482.
- Anthony, L. (2024). AntConc: A Learner and Classroom Friendly, Multi-Platform Corpus Analysis Toolki. *IWLeL*, 7-13. https://www.laurenceanthony.net/research/iwlel_2004_anthony_antconc.pdf
- Asset Purchase Agreement. /Գույքի առքուվաճառքի պայմանագիր: (2015). *E-gov*. https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2015/04/15_430_1.pdf?fbclid=IwAR296DwDdvA3ahZjS97sAnDUY6fpA7BILWJM7MKbtbyEb
- Cardiff Index to Legal Abbreviations. (2024). *Cardiff University*. [https:// www.legalabbrevs.cardiff.ac.uk/](https://www.legalabbrevs.cardiff.ac.uk/)
- Crystal, D. (2008). *Txting: The Gr8 Db8*. Oxford, Oxford University Press.
- Eastern Armenian National Corpus. (2007-2009). *EANC*. URL: eanc.net
- Herring, B. E. & Nicoll, R. A. (2016). Long-Term Potentiation: From CaMKII to AMPA Receptor Trafficking. *Annual Review of Physiology*, Vol. 78, 351-365. DOI: <https://doi.org/10.1146/annurev-physiol-021014-071753>

- Imre, A. (2022). Categorizing and translating abbreviations and acronyms. *Open Linguistics*, Vol. 8, No. 1, 378-389. DOI: <https://doi.org/10.1515/opli-2022-0204>
- Matthews, J. R.& Baish, M. A. (2007). *State-by-State Authentication of Online Legal Resources*. Chicago: American Association of Law Libraries.
- Paris, D. (2022). Abbreviations (Acronyms and Initialisms) in Business Communication. *Journal of Accounting and Management*, Vol.12, No. 2, 89-98.
- Палкова, А. В. (2004). Аббревиация как способ образования новых лексических единиц в сфере компьютерной техники и Интернета. *Иностранные языки в экономических вузах России: Всероссийский научно-информационный альманах*, 66-80.
- Ավետիսյան, Յու. (2011). *Պաշտոնական ոճ*: Երևան, Զանգակ-97:
- Դանիելյան, Գ. (2021). *Իրավաստեղծ գործունեություն և իրավաբանական տեխնիկա*: Երևան, Տիգրան Մեծ:
- ՀՀ օրենքը միջազգային պայմանագրերի մասին. (2018). *Arlis*. URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=120816>
- Մարգարյան, Ա. (1993). Ժամանակակից հայոց լեզու. բառագիտություն: Երևան, ԵՊՀ:
- Սևակ, Գ. (2009). *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց*: Երևան, ԵՊՀ:

V. Mirijanyan – *The Use of Abbreviations in Legal Contracts and their Translation into Armenian: Corpus Analysis.* – The paper refers to the study of abbreviations widely used in English and Armenian legal documents. The correct use of abbreviations plays a particularly important role in legal documents, in which it aims at avoiding the usage of repetition of long phrases and saving space. When translating documents related to the legal field, the translator needs a deep knowledge of abbreviations, their peculiarities and norms of usage to make the complex translation process easier. The present small-scale corpus analysis of the international property purchase and sale agreement signed between Armenia, US and Luxembourg and comparison of the results allows to disclose both correct usages of abbreviations and translation drawbacks referring to abbreviations. The results will allow to greatly improve the quality of translation of documents in general and contribute to the accurate translation of international contracts in particular.

Keywords: *abbreviations, legal document/contract, translation, AntConc corpus tool, corpus analysis*

В. Мириджян – *Использование сокращений в юридических договорах и их перевод на армянский: корпусный анализ.* – Данная статья

посвящена изучению аббревиатур, широко используемых в английских и армянских юридических документах. Правильное использование сокращений играет особенно важную роль в юридических документах, поскольку экономит место и позволяет избежать повторения длинных фраз. При переводе документов, переводчику необходимо глубокое знание сокращений и норм их употребления, чтобы облегчить сложный процесс перевода. В результате корпусного анализа международного договора купли–продажи недвижимости, подписанного между армянскими, американскими и люксембургскими компаниями, и сравнения результатов, выявлены не только преимущества использованных в документе сокращений, но и недостатки, которые позволяют значительно улучшить качество перевода и способствуют точному переводу аналогичных документов.

***Ключевые слова:** сокращения, юридический документ/контракт, перевод, инструмент корпуса AntConc, корпусный анализ*